ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ **ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Գեվորգ Ադամյանը, Հարություն Համազասպյանը, Մխիթար Հայրապետյանը, Միշա Ղուկասյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Համլետ Արամյան, Վրեժ Դանիելյան, Սիրաք Ռաֆայելյան, Հայկ Պողոսյան, Սերյոժա Ավալյան, Հակոբ Մարտիրոսյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վազգեն Ադամյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Ստեփանյանը

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 24.01.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

Հաստատել համայնքի ավագանու՝ 24.01.2019թ. թիվ 1 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ 42 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.079851ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 1/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ մասով և "Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Հաստատել Ճամբարակ համայնքի 2019 թվականի բյուջեն

ա/ եկամուտների գծով-352913.3 հազար դրամ
բ/ ծախսերի գծով368650.4 հազար դրամ
գ/դեֆիցիտը / պակասորդը/-326779.3 հազար դրամ

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը գործառնական դասակարգման համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջյան հավելուդը կամ դեֆիցիտը պակասորդը/ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուդը, օգտագործման ուղղությունները համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման համար հատված 6-ի:
8. Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն.
ա/ Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների մինջև.
բ/ Սահմանել՝ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 տոկոսը:
9. Վարչական բյուջեի տարեսկզբի 15528.9 հազար դրամ ազատ մնացորդից 15528.9 հազար դրամը ուղղել ֆոնդային բյուջե:
10. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ թողել 0 դրամ նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված պարտավորությունների կատարմանը:
11. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
ա/ թույլատրել հանայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրով սահմանված գումարի 20,0 % չափաքանակը չգերազանցվող ներքին վերաբաշխումներ՝ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
բ/ սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների գումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 20.0 %-ը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Ճամբարակի համայնքապետարանի խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովի 2019 թվականի աշխատանքային ծրագիրը /կցվում է/:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ճամբարակի ավագանու անդամ Մխիթար Հայրապետյանի լիազորությունները համարել դադարեցված քանի, որ անցել է պայմանագրային ծառայության ՀՀ զինված ուժերում:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության՝ 01.09.2005թ. N 1428-Ն որոշման, ինչպես նաև ՀՀ Կրթության և գիտության նախարարի՝ 26.01.2007թ. N 29-Ն և 21.07.2010թ. N 754-Ն հրամանների պահանջները.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2019 թվականի հաստիքացուցակները, աշխատողների թվաքանակները և պաշտոնային դրույքաչափերը:/Կից հավելվածով/
2. Ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 5/

Լսեցին
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով նույն օրենքի 35-րդ հոդվածի դրույթներով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և ղեկավարվելով ՀՀ «Հողի հարկի մասին» օրենքի 10-րդ հոդվածի (10-րդ հոդվածը լրաց. 05.04.00 ՀՕ-50, 30.04.08 ՀՕ-55-Ն, 08.12.11 ՀՕ-353-Ն, 27.02.12 ՀՕ-29-Ն, 21.03.12 ՀՕ-95-Ն) 11-րդ կետի պահնջներով՝

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվի առնելով սահմանապահ Վահան գյուղի բնակիչ Գևորգ Ճաղարյանի դիմումը այն մասին, որ իր ընտանիքին պատկանող հողերի վրա 2008-2012թթ.–ին կուտակվել էր պարտք, որը ինքը տարիների ընթացքում մուծել և զրոյացրել է: Մնացել է միայն տուժը, որը կազմում է 33076 (երեսուներեք հազար յոթանասունվեց) դրամ: Ելնելով սոցիալապես անապահով վիճակից՝ խնդրում է օրենքի սահմանում արտոնել տույժը: Սահմանված կարգով դուրս գրել պարտքը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ 42 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.079851 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով., «Տեղական ինքնակառավարման մասին» օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով, 109 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքի Գետափնյա 42 հասցեի 05-002-0166-0006 կդաստրային ծածկագրով սեփականություն հանդիսացող 0,079851 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողատարածքը օտարել աճուրդ-վաճառքի կարգով: Հողամասի համարա մեկնարկային գին սահմանել 177,270 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7/

Ավագանու անդամներ

ՎԱԽԹԱՆԳ ԲԱԲԱՅԱՆ
ԹԱԹՈՒԼ ԴՈՒՄԱՆՅԱՆ
ՄԱԿԻՉ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ
ԶՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՆՈՐԱՅՐ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արտակ Ստեփանյանը
_____